

ՀՈԳԵԿԱՆ ԱՊՐՈՒՄ

ՀՈԳԵԿԱՆ ԱՊՐՈՒՄ

ԵՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հոգեկան ապրում մը նախ բոլորովին ներքին ապրում մըն է, ենթակայական և անտարածային: Հոգեկան երեւոյթները, ինչպէս զգալ, խորհիլ, կամենալ, որ այդ ապրումը կը գոյացնեն կամ կը գոյանան անով, մեզի կը ներկայանան, բոլորովին տարբեր արտաքին շարժարկի երեւոյթներէն: Եւ ասով իսկ ունին իրենց իւրայատուկ յատկանիշեր:

Հոգեկան երեւոյթները նախ և առաջ կը ներկայանան իրր զուտ տեւողական վիճակներ ու երբեք տարածութեան մէջ տեղ չեն բռներ: Հոգեկան երեւոյթ մը միջոցին (espace)-ին մէջ չէ բնաւ: Զինք կրնար մտածել ու նոյնիսկ երեւակայել թէ սա սեղանին ծայրը, սա մտածումը կայ, քիչ մը անգին իղձը եւայլն: Ասով հոգեկան երեւոյթները անտեսանելի են և չեն իյնար ունէ շօշափելիքի տակ և չեն ներկայացըներ տարածութեան մէջ պատկեր մը, ու չեն կրնար ալ խորհուլիլ այդպէս. ծիծաղելի է ըսել քառակուսի կամ եռանկյուն մտածում կամ զգացում: Հոգեկան երեւոյթը նաեւ կը յատկանշուի անով որ ան միայն գինք կրողին կողմէ կը զգացուի ու անոր միայն կուտայ իր ստոյգ ճանաչողութիւնը: Մինչ արտաքին երեւոյթներ նոյն ձեւով, նոյն ժամանակի մէջ շատ մը մարդերու կողմէ նոյն կը տեսնուին ու նոյն կերպով կը տեսնուին: Ուրեմն հոգեկան երեւոյթին կարեւոր յատկանիշներէն մին է նաեւ այս զուտ ենթակայականութիւնը:

Ուստի հոգեկան ապրումը լոկ ներգրգացուած վիճակներու ամբողջութիւն մըն է, տարածութենէ դուրս, և է լոկ զայն կրողին յատուկ:

Արդ, հոգեկան վիճակներու ամբողջութիւնը, զոր մենք կը կոչենք հոգեկան ապրում կամ հոգեկան կեանք, կը ներկայանայ

մեզի իբր գիտակցական լինելութիւն մը: «Ըլլալ անցնիլ մըն է անս տեւել մը անցեալէն դէպի ներկայ և ներկայէն անցեալ: Եղող անցնող իրողութիւն մըն է ան բառին բուն իմաստով, լինող կեանք մը, ուր սակայն անիմանալի հրաշքով մը անցեալին մէջ մտնող ներկան չի կորսուիր բնաւ, այլ ինքնայատուկ եղանակով մը կը մնայ ներկային ետին, անոր մէջ նորէն յիշուելու պատրաստ:

Հոգեկան կեանքի այս ընդհանուր և էական հանգամանքը յատկանշուած է Ամերիկացի հոգեբանի մը William James-ի կողմէ, Գիտակցական ֆունգցիոնալիզմի մեթոդով: Եւ այդ հոսանքին զիխաւոր յատկանիշերը:

ա) Գիտակցական կեանքը էապէս փոփոխութիւն է, տարբեր վիճակներու շարժումներէն: Մեր հոգեկան վիճակները մէն վայրկեան կան ու չկան: Ոչ մէկ վիճակ մեր մէջ կը կենայ, ինչպէս սա սեղանը հոս կեցած է: Հետեւաբար հոգեկան կեանքը շարժուելու բան մըն է: Պիտի բեր ունենք սակայն խորհելու թէ այդ վիճակները, որոնք կը յաջորդեն իրարու, իրենք զոնէ անկայուն են: Հիփոթետոզ «վիճակ»: Սրինակ, թէ տխրութեան, ցաւի, ուրախութեան, յուսահատութեան վիճակներ իրարու կը յաջորդեն մեր մէջ, բայց անոնց մէջ իւրաքանչիւրը կեցած բան մըն է: Իրականութիւնը այնպէս չէ սակայն: Տխուր ենք: Այո՛, որոշ պահ մը տխուր վիճակի մէջ կը մնանք կ'ըսենք, սակայն աւելի լաւ դիտենք ու պիտի տեսնենք թէ այդ վիճակը իր կարգին կեցած վիճակ մը չէ, այլ զինք կը կազմեն աւելի փոքր վիճակներ և այսպէս շարունակաբար: Տխրութեան սկսած վայրկեանին չէիր ան ինչ որ ես հիմա: Տխրութիւնը երկարով կամ խորացած է քու մէջդ և կամ թէ սկսած է արդէն փարատուիլ: Հոգեկանութիւնը ուրեմն վիճակ մը չէ այլ մշտական հոսում մը, ուրիշ խօսքով ժամանակ մըն է, բայց թանձրացեալ ժամանակ մը: Ինչպէս ժամանակը չկենար ու կ'անցնի, ան ունի ժամանակը, վայրկեաններ, երկվայրկեաններ, բոլորակներ որոնք չեն կենար ու կ'անցնին միշտ կը թաւալին, հն ու չեն, նոյնպէս ալ մեր հոգեկան ապրումը:

Միւս կողմէ սակայն թէ և այդ վիճակ

ները կ'անցնին, թէ և հոգեկան կեանքը աւելն վարկան նոր բան մը կը բերէ, բայց այս անցքերուն մէջ որ եւ է կտրատում չկայ: Այս փոփոխութիւնը իրարմէ անկախ վիճակներէն չի բազկանար այլ անոնք շատ քայլաւ ան, որով իւր երկրորդ յատկանիշ հոգեկան ապրումին պիտի գնենք իր շատ քայլարկանութիւնը: Ահնք հիմա ենք անցնելին յարաբերաբար ինչ որ ենք: Եւ անցնելին ալ իր կողմէն ներկային յարաբերաբար իր նկարագրիւր կը փոխէ միշտ: Ներկան կ'անուշցնէ երբեմն անցեալը ու տառապանքի, գոռաբանութեան ներկային մէջէն մարդ իր անցեալը կ'ողգկողչէ, «Այլ ինչ երջանիկ օրեր էին»... ու անցելին ալ իր կարգին աւելի անուշ կամ աւելի զգոյսով կ'ատել կուտայ մեզ ներկան:

Հոգեկան վիճակներու շարադարձութիւնն է որ մեզի կը ներկայացնէ գիտակցական հոգեանքը իբր միակ տեսողութիւն մը, տեսողութիւն մը որ վերացական չէ սակայն ժամանակին պէս, այլ թանձրացեալ և լեցուն: Լեցուն գինք կազմող պատահարներով: Ասոր համար է որ Bergson կը կոչէ զայն «թանձրացեալ տեսողութիւն մը» (une durée concrète).

Մեր տեսողութեամբ է որ մենք կ'ապրինք իրաւունք՝ ժամանակը, անով է որ մեզի համար ժամանակը հմայք մը չէ լոկ այլ պատմութիւն, կեանք:

Երբորդ յատկանիշ հոգեկան ապրումին այն է թէ ան միակ անձի որ ապրումն է: Մեր հոգեկան ապրումի վիճակներէն չկայ հատ մը որ մերը չըլլայ: Նսը բոլոր մեր վիճակներուն յատկան է, կեդրոնն է և այսպէս բոլորին համար: Ձկայ մտածում մը որ մէկու մը մտածումը չըլլայ: Անկախ, ինքնընտանեան մտածում մը, զգացում մը չ'ենթադրուիր: Այսպէս իւրաքանչիւր գիտակցական կեանք իր յաջորդական և բազմաթիւ պահերով անձի մը, անձնակա՝ նուիրեան մը եսին մէջ կայ, և անոր անքակտելի և անոր հետ նոյնացեալ մաս կը կազմէ: Նսը իր ծնունդէն ականաւ, ամէն վարկեան կը թաւալի, կ'անցնի զանազան փոփոխող վիճակներէ և սակայն միշտ կը մնայ ու անոնց բոլորով մէկ, նոյն և տեսական:

Ուրեմն մեր գիտակցական կեանքը փոփոխութիւն, քաղաքականութիւն է, սակայն

ան միութիւն մըն է միեւնոյն տոհմ եսին մէջ, իբր անձի մը հոգեկան վիճակներուն ամբողջութիւն, և այդ եսին տակ դարձեալ անոնք կը մնան, կազմելով անցեալի յիշատակներ, փորձաբանութիւններ և այլն, որոնք հոն են, մեր ամէն պահուն գիտակցութեան ետե ներկայ, պատարաստ՝ վերադարձնելին ու ի հարկին ներկայանալու մեզի: Ուրեմն մեր անցեալը մեր լինելութիւնն է իրեն ձգուած իր ամբողջ օրերով մեր եսին մէջ է, անոր շարադար և մեր կեանքը կազմող:

Հիմա գիտակցական կեանքին, հոգեկան ապրումին հանգամանքներու այս քննութիւնն է եթէ անցնինք երաժշտական կտուրին, միջոցին ներկայացուցած հանգամանքներուն, նոյնօրինակ քննութեան մեծապէս ուշադրաւ իրողութեան մը առջև պիտի գտնենք մենք զմեզ, երաժշտական կտուր, միջոցին արդարեւ կը ներկայացնէ հոգեկան ապրումին հետ ճիշդ նոյն յատկանիշները:

Երաժշտական միջոցի մըն ալ մեզի կը ներկայանայ ճիշդ հոգեկան երեւոյթներու պէս իբր անտարած իրողութիւն մը: Ձենք տեսնել երաժշտական միջոցի մը, այլ կը լսենք զայն ու կ'ապրինք մեր ներքին գիտակցութեան մէջ, կը զգանք միայն և առանց մեր գիտակցական կեանքին, որ երաժշտական գործին փոխ կուտայ իր իսկ տեսողական պատասաը, երաժշտութիւնը ըսուած բանը չկայ: Մենք կը լսենք ու կ'ապրինք երաժշտութիւնը մեր հոգիով, եթէ չլսէինք ու չխորհէինք երաժշտութիւնը պարզ թրթուած մը պիտի մնար միջոցին մէջ: Ուրեմն մեր լսելով, մեր զգուշով ու խորհելով է որ կայ ան, չներկայանար մեր աքիքին, ուստի տարածութեան մէջ չէ: Խորի մը համար երաժշտութիւնը ըսուածը գոյութիւն չունի, չի գիտեր թէ ինչ է միջոցի մը, սակայն անոր համար կայ գիւղեցիկ նկար մը, որովհետեւ կը տեսնենք զայն տարածութեան մէջ:

Մարդիկ երաժշտութիւնը ներկայացնելու համար նշաններ են յօրինած ու հինգ գիծերու մէջ տեղաւորելով զանոնք կարծես թէ պահած են զայն պատկերի մը ձեւին տակ: Սակայն այդ նշաններ երաժշտութիւն չեն, մէկը պէտք է որ արթնցնէ զանոնք, ձայնի վերածէ ու մենք լսենք և

ճանչնանք, այսինքն փոխ տանք իրեն մեր իսկ ներքին, գիտակցական տեւողութիւնը, լինելութիւնը ու այն ստեղծ միայն գոյութիւն կ'առնէ երաժշտական միջոտին, որ կը խօսի մեր հոգիին, կը յուզէ, կամ կը խանգաժառէ կ'ուրախացնէ կամ կը վերացնէ մեզ դէպի հոգիին ներքին երկինքները, ու նոյնիսկ մինչև Աստուած: Ուրիշն երաժշտութիւնը մեր մէջ հոգեկան ազդեցութիւն իսկ է զոր կը ձայնաւորէ, կ'երանգաւորէ և կ'ապրի ինք ալ մեր մէջ, ճիշդ իր տեղծած այդ ապրումին շնորհիւ, աւոր մէջ:

Երաժշտութիւնն ալ, երաժշտական մեջտիւն ալ հոգեկան կեանքի լինելութեան յատկանիշներուն յարեւմտեան յատկանիշներով մեզի կը ներկայանան:

ա) Ինք ալ հոգեկան կեանքին պէս ըլլալ անցնիլ մըն է, լինելութիւն մըն է: Եւ այս իսկ պատճառաւ կրնանք զայն կուգիլ կեանք մը նաեւ որ սակայն երաժշտական կեանք մըն է: Երաժշտական մեջտիւնն էսպէս փոփոխութիւն մըն է, ան կայ իր շարունակական յաջորդութիւն ձայներով, որոնց իրարու յաջորդելը՝ կուտայ տեւողութեան մէջ ծնունդ առնող ներդաշնակութիւն մը:

Թէն մեջտիւն մը կը շինուի նոթերով, սակայն այդ իւրաքանչիւր ձայնը, նոյնիսկ իբր մէկ ձայն տեւած լսելն է ինք իր մէջ անփոփոխ տեւողութիւն մը, այլ այն ալ շարժում մըն է, միշտ փոխուող բան մըն է որուն մէջ հետզհետէ կ'անհի երաժշտական մեջտիւնին իմաստը: Ու յետոյ այդ նոթերը իրարմէ տարալիշտ եկտիւր չէ որ կը ներկայացնեն, այլ շարայար բան մը, տեւողութիւն մը: Այս նոթը եթէ բարձր է՝ բարձր է զգացուած յարաբերաբար իր նախորդէն, կամ եթէ ցած է յորէն այդպէս է խորհուած նորէն յարաբերաբար իր նախորդէն: Ուրիշն հոս ալ, մեջտիւն մը մէջն ալ նախորդը (անցեալը հոգեկան կեանքի պարագային) կուտայ նոր նոթային իր իմաստը: Ու փոխադարձաբար ալ նոր նոթերը իրենց նախորդներուն կուտան նոր որոշ իմաստ մը: Օրինակ, երբ մեջտիւն վերջացնող նոթը կ'իմանանք իբր այդ, կ'ըսենք կամ կը զիտակցինք թէ ուրիշն նախորդ նոթը վերջաւորութիւնը պատրաստողն էր: Ուրիշն երաժշտական մեջտիւն

տեւողութիւն մըն է, շարայար լինելութիւն, և տեւողութիւն մըն է ճիշդ հոգեկան ապրումին պէս, այսինքն լեցուն, թանձրացեալ:

Իբր երբորդ յատկանիշ երաժշտական կտորին, մեջտիւնին, պիտի գտնենք որ զայն կազմող նոթերը ամբողջ կապուած են ու կան այդ մեջտիւնին միակ իմաստին մէջ: Թէն երաժշտութիւնը կը տեւէ միշտ փոխուելով, սակայն անոր իւրաքանչիւր տարրը, ձայնը կը մնայ անոր իմաստին մէջ, նորերը կուգան արձանագրուիլ այդ իմաստին մէջ հոն գտնելով նախորդ նոթերը որոնց հետ միշտ հասունցնելով պիտի ամբողջացնեն ու աւարտեն միակ այդ իմաստը: Արդ, բոլոր նոթերուն տուած իմաստները բուն մեջտիւնին իմաստին է որ կը կապուին: Հոս այս պարագային իմաստը կը ներկայացնէ եւս երաժշտական մեջտիւն: Կրնանք ըսիլ որ մեջտիւնին իմաստը նոյն է զայն կազմող նոթերուն համար ինչ որ եսն է մեր հոգեկան զանազան պահերուն համար: Եւ ինչպէս մեր կեանքը իր պահերով կայ ու այդ պահերը իրմով, այնպէս ալ մեջտիւնին իմաստը իր բոլոր նոթերով իրագործուած է բայց այդ նոթերը իրենց երաժշտական այդ մասնաւոր նշանակութիւնը ունին միայն շնորհիւ զիրենք միտքորդ միակ այդ իմաստին:

Հոգեկան ապրումին, գիտակցական կեանքին և երաժշտութեան յօրինած գործերուն այս այնքան ուշադրաւ հանգիստութեան կրնանք եզրակացնել թէ երաժշտութիւնը այն արուեստն է որ բոլոր միւսներէն աւելի հոգեկան ապրումը խորացնումնանցող գործեր կուտայ: Ասով կը բացատրուի անոր կարողութիւնը հոգեկանը հարազատ կերպով արտայայտելու և ասով իսկ ազգելու հոգիներու վրայ: Ասով կը բացատրուի թէ ինչու երաժշտութիւնը մեր ներքին կեանքին լինելութեան մասնաւորաբար անոր dynamism-ին, անոր զգայական tonalité-ին բուն իսկ հարազատ արտայայտիչն է, նոյնիսկ պիտի ըսեմ հոս բանաստեղծութեան ևս ինչ, Բառերը որ դեռ արտաքին աշխարհէ պատկերներ կուտան դժուար կ'արտայայտեն այն ինչ որ երաժշտութիւնը աւելի զիւրութեամբ և հարազատորէն մեր բուն ու զուտ ներքին կեանքը կ'արտայայտէ: Երաժշտութիւնը

ՔՆՆԱԴԱՏԱՆԿԱՆ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ

ԵՐԵՔ ՍԻՒՆԵՐԸ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱԶԻՅՑՈՒԹԻՒՆԸ

ԿԵԱՆՔԻՆ ՎՐԱՑ

Վերև բացատրուած գեղագիտական վարդապետութիւնն այն է զոր Պրիւնըթիէր տարազեց և կիրարկեց մանաւանդ իր ասպարէզին սկիզբը։ Անկէ ոչ մէկ մաս լքեց կամ ուրացաւ յետագային։ Միշտ զինք ուշադիր տեսանք զատորոշելու իր ուսումնաւորած երկերուն գեղեցկութիւնը, արտայայտելու՝ թէ պօճմա մը ըլլալէ առաջ սնշանն մը կամ պաւերաթուղթն մը, պօճմա մըն է, զոր իմաստը պէտք է և դատել ըստ այնմ։ Բայց հետզհետէ որ տարիքը կ'առնէր, աւելի հակամէտ կը դառնար ներմուծելու, այս իմացումին և դատումին մէջ, նոր չափանիշ մը, կամ ա-

բացառիկ կարողութիւնը ունի այսպէս զմեզ արտաքին տարածական աշխարհէն ազատելու, դէպի ներս, մեր զուտ հոգեկան ու իմանալի լինելութեան անդրադարձնելու ու այդպէս կարծես զուտ հոգեկան երկինքի մը մէջ տանելու ու իր թիւերուն վրայ, իր անտեսանելի, քաղցր ու միանգամայն հըզօր, կարծես հրեշտակային թեւերուն վըրայ մեր հոգին կրնայ թռչկոտել իմանալի երկինքին խորքերը։

Ասոր համար է որ Եկեղեցին զԱստուած փառաբանելու համար, ապրեցնելու համար զմեզ արտաքին աշխարհէն անդին դէպի Աստուած բարձրացման խորհրդաւոր կեանքով նախընտրած է երաժշտութիւնը։ Կերպանք քանի որ սէր ունինք, ու հոգեւոր երաժշտութիւնը բարայայտիչն է մեր սիրուն (հաւատքին), առ Աստուած և զերազանցապէս կ'արտայայտէ աստուածայինով վրաւուած հոգիին թռիչքը։

ւելի շիտակը, շնորհելու աւելի ևս աւելի մեծ կարեւորութիւն զազափարի մը որ երկար ատենէ ի վեր իրը եղած էր։

Միշտ աւելի զգայուն կը դառնար գրականութեան ներգործութեան մասին կեանքին վրայ, ազդեցութեան՝ հեղինակներու կողմէ արտայայտուած գաղափարներու՝ մարդոց վարքին վրայ ընկերութեան մէջ։

Այս տեսակէտէն Պրիւնըթիէրի կրած եղափոխութիւնը մօտէ է անոր որ առաջնորդեց La Fontaine et ses fables-ի հեղինակը Philosophie de l'Art-ի մէջ արտայայտուած ըմբռնութիւնը։ Ինչպէս որ Taine, սկիզբը, հոգածու էր միմիայն բացատրելու կազմութիւնը արուեստի երկին զոր կը նկատէր իբրեւ նշան, և ջնջելով ինչ որ ան կրնար պարունակել իբրեւ մղում դէպի չարիք, կամ օրինակներ առաքինութեան, այնպէս ալ Պրիւնըթիէր, տեսանք, դրած էր մանաւանդ որոշելու տեղը զոր երկը կը բռնէր շնորհիւ իր յատկութեանց, և իր կարգին, այդպէս ըսած, սեռերու աստիճանաւորութեան մէջ, եւ ինչպէս որ Taine, հասուն տարիքին, հաշուի առաւ, աւելի ևս աւելի, գրական երկերու բարոյականութիւնը, ճարեգործութեան աստիճանը իրենց նկարագրին, Պրիւնըթիէր, հետզհետէ որ կը յառաջանար իր ասպարէզին մէջ, աւելի ևս աւելի ուշադիր կը դառնար դասին որ արուեստի երկերէն կ'ելլէր, ընկերային կեանքին համար, ազդեցութեան՝ բարի կամ չար, ընթերցողներու հոգիին վրայ։

Մարդիկ հասկցան բարոյական մտահոգութիւններուն տեղը, Պրիւնըթիէրի քըննադատութեան մէջ, Paul Bourget-ի Disciple-ին մասին իր յօդուածներուն առթիւ։ Այս վէպին շուրջ սկսած վիճարանութիւնները պատահական պատճառ եղան փայլուն կերպով յայտնելու հանրութեան, իր քննադատութեան այսնորկեպարանքը։ Հաջորդ հոն գրուած է հետեւեալ եզրերով՝ «Կաղափարները կ'ազդեն թէ ոչ բարեբերու վրայ»։ Բանաստեղծ մը, զատեւրադիր մը, վիպագիր մը մանաւանդ, իմաստասէր մը, դիտականը նոյն խնդրի պէտք չէ՞ նկատեն իրենք զիրենք քիչ մը իբր խնամատար հոգիներու։ Գոտախախտը դրական է։ Արդարեւ կասկածէ դուրս է որ գաղափարները կը ներգործեն մարդոց վրայ,